ԱՇԽԱՐՀԱԺՈՂՈՎ. ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ՝ ԵՐԿՐԻ ԴԱՍԱՅԻՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐ

Արտակ Մովսիսյան

Հոդվածում անդրադարձ է կատարվում Հին Հայաստանի բարձրագույն խորհրդակցական ժողովի՝ Աշխարհաժողովի իրավունքներին, գործառույթներին, այդ մարմնի դասային ընդգրկմանը: Պատմական սկզբնաղբյուրներից պարզ է դառնում, որ այն իրավասու է եղել հայտարարելու պատերազմ, աթոռազրկելու երկրի անարժան աշխարհիկ և հոգևոր առաջնորդներին, կազմակերպելու կաթողիկոսի ընտրություն, սահմանելու օրենքներ ու կանոններ բոլորի համար: Հատուկ ուշադրություն է դարձվում այն հանգամանքին, որ երկրի բարձրագույն խորհրդակցական ժողովում ներկայացված են եղել երկրի գրեթե բոլոր դասերն ու խավերը՝ արքայից մինչև շինականներ: Դասային համընդգրկման այս խիստ դրական հանգամանքը կարելի է օգտագործել մերօրյա կառավարման համակարգում:

Ներածություն

Յուրաքանչյուր ժողովրդավարական հասարակության ներդաշնակ գոյատևման կարևոր նախապայմաններից մեկն այն կազմող դասերի ու սոցիալական խավերի իրավահավասար գոյակցությունն է, ինչը ենթադրում է պետության ներքին քաղաքականության մշակման մեջ այդ խավերի շահերի ներառում: Այս իմաստով կարևոր է պատմական փորձի ուսումնասիրումը (եթե այդպիսին գոյություն ունի), ինչը հնարավորություն է տալիս ոչ միայն չկրկնել անցյալի սխալները, այլև գործածել պատմական փորձի արդյունքում կուտակված դրականը:

Այս առումով ուրախալի է, որ հայոց բազմահազարամյա պատմության ընթացքում շատ են փաստերը, որոնք վերաբերում են դասերի և սոցիալական խավերի իրավունքներին: Անդրադառնանք Հին Հայաստանի բարձրագույն խորհրդակցական մարմնին՝ Աշխարհաժողովին:

1. Համառոտ պատմական անդրադարձ

1265 թվականին Անգլիայում ծագած քաղաքացիական պատերազմի ընթացքում հրավիրվեց ներկայացուցչական ժողով, որին, բարոններից բացի, մասնակցում էին երկուական ասպետ և երկուական քաղաքացի՝ միայն նշանավոր քաղաքներից: Այսպես ստեղծվեց աշխարհում առաջինը համարվող անգլիական պառլամենտը՝ մերօրյա պառլամենտարիզմի նախակարապետը [1-3]:

Անգլիայում, ապա Եվրոպայի և այլ մայրցամաքների երկրներում ստեղծված պառլամենտները (որոշ երկրներում այլ կերպ էին կոչվում՝ կոնգրես, ռիքսդագ, սեյմ, ստորտինգ, խորհուրդ, խորհրդարան և այլն) ընդունում էին օրենքներ, ստեղծում սահմանադրական հսկողության մարմիններ, հաստատում բյուջե, միջազգային պայմանագրեր և այլն: Պառլամենտը համարվում էր դեմոկրատիայի բարձրագույն արտահայտություն և, այսօրվա չափանիշներով, այն ծնունդ առավ 1265 թվականին:

301 թվականին Մեծ Հայքի արքա Տրդատ 3-րդը հրովարտակ հղեց «երկրին, գավառներին, նախարարներին, զորքերին, շինականներին ու ամենքին», որ ներկայացուցիչներ ուղարկեն՝ վճռելու Հայոց աշխարհի դավանանքի հարցը: Ագաթանգեղոսի վկայությամբ, Գրիգոր Լուսավորիչը «հավանության խորհուրդ առավ» հավաքվածներից՝ նախկին կրոնն իր բոլոր հետքերով հանդերձ «քանդելու, կործանելու և մեջտեղից վերացնելու ու ջնջելու նպատակով» [4, ՃԸ, 777]: Եվ քրիստոնեությունը ճանաչվեց պետական կրոն:

Հայոց կյանքում բախտորոշ նշանակություն ունեցող այս վճիռը կայացնող ժողովն առաջինը չէր հայոց պատմության մեջ և վերջինն էլ չեղավ: Հայ մատենագրության և պատմագիտության մեջ նման ժողովները կոչվում են «Աշխարհաժողով» [5, էջ 249-252; 6]: Դրանց մասին կան բազմաթիվ տեղեկություններ, որոնցից իմանում ենք, որ Աշխարհաժողովն իրավասու էր մշակելու և ընդունելու բոլորի համար պարտադիր կանոններ, օրենքներ, լուծելու պետական նշանակության կարևորագույն հարցեր, ինչպիսիք են պատերազմ հայտարարելը, կաթողիկոսի ընտրությունը և անգամ թագավորին գահընկեց անելը:

2. Արտակարգ իրավիճակներում Աշխարհաժողովի հրավիրումը

Աշխարհաժողովը սովորաբար գումարվում էր արքայի հրամանով, որն էլ նախագահում էր ժողովում. «Ամեն կողմից, ըստ հրամանի, շուտափույթ հասան նշանակված վայրը՝ Վաղարշապատ քաղաքը՝ Այրարատ գավառում, և հենց թագավորն էլ ճամփա ընկնելով՝ հասավ այնտեղ» [4, ՃԺԱ, 791]:

Աշխարհաժողովներ էին գումարվում արտակարգ պայմաններում: Ահա նման իրավիճակում հրավիրված Աշխարհաժողովի մասին Փավստոս Բուզանդի հաղորդումներից մեկը, որը վերաբերում է Տիրան թագավորի գերվելուն հաջորդած իրադարձություններին. «Այնուհետև ավելի մեծ միաբանությամբ հավաքվեցին Հայոց աշխարհի մարդիկ – մեծամեծ նախարարները, ավագները, կուսակալները, երկրի տերերը, ազնվականները, բացի զորավարներից, նույնիսկ ռամիկ շինական մարդիկ: Սկսեցին իրար հետ խոսել և ասում էին. «Այս ի՞նչ է մեր արածը, նստել սուգ ենք անում. թշնամիները սրանից կօգտվեն, շատ չանցած՝ էլի մեր երկիրը կարշավեն: Եկեք, մենք մեզ մխիթարենք, մեզ ու մեր երկրին տեր կանգնենք և մեր բնիկ տիրոջ համար վրեժխնդիր լինենք» [7, դպր. Գ, գլուխ ԻԱ]:

Արտակարգ իրավիճակում հրավիրված մեկ այլ Աշխարհաժողով է տեղի ունենում Արշակ Բ-ին գահընկեց անելու նպատակով, ինչը ձախողվում է կաթողիկոս Ներսես Մեծի միջամտության շնորհիվ: Կաթողիկոսի մոտ տեղի ունեցած աշխարհաժողովին մասնակցում էին երկրի մեծամեծներից մինչև շինականների դասապետերը[1]:

Ի տարբերություն Արշակ Բ-ին գահընկեց անելու անհաջող փորձի, մեր թվարկության 16 թվականին Նպատ լեռան մոտ հրավիրվեց Աշխարհաժողով, որի նպատակն էր Հայաստանի գահին տիրացած հռոմեական դրածո Վոնոնես Արշակունուն գահընկեց անելը, ինչը և տեղի ունեցավ: Ժամանակակից մատենագրի վկայության համաձայն՝ Վոնոնեսը Նպատի ժողովից հետո «թագավորելու ոչ մի այլ հնարավորություն չուներ» [8, 9]:

Քանիցս Աշխարհաժողով է հրավիրվել երկրի հոգևոր առաջնորդի ընտրության հարցի առթիվ: Ահա թե ինչպես է ներկայացվում նման իրավիճակներից մեկը Փավստոս Բուզանդի երկում. «Այն ժամանակ *աշխարհովին միաբան խորհուրդ արեցին,* թե ով պետք է դառնա հայրապետության կաթողիկոսը» [7, դպր. Գ, գլուխ ԺԷ]:

3. Աշխարհաժողովի ամենամյա գումարո՞ւմ

Մեր մատենագրության մեջ հիմնականում հիշատակվում են արտակարգ պայմաններում գումարված Աշխարհաժողովները: Իսկ թե երբ են գումարվել սովորական (հավանաբար՝ ամենամյա) Աշխարհաժողովները, կարելի է ենթադրել 5-րդ դարում տեղի ունեցած Շահապիվանի կանոնադիր ժողովի ընդունած կանոնադրության նախաբանից՝ «Նորաբեր տոնի ժամանակ» [10, 11], այսինքն՝ նավասարդյան տոնակատարության օրերին:

[1] «Ապա Հայոց աշխարհի *թագավորության բոլոր մարդիկ* հավաքվեցին և եկան Հայոց մեծ եպիսկոպոսապետ Ներսեսի մոտ,- մեծամեծներ, նախարարներ, կուսակալներ, կողմնակալներ, գավառատերեր, գործակալներ և շինականների դասապետեր» [7, դպր. Դ, գլուխ ԾԱ]:

Նախաքրիստոնեական շրջանում Աշխարհաժողովը գումարվում էր Բագրևանդ գավառի Նպատ լեռան ստորոտին գտնվող Բագավանի Վանատուր աստծո տաճարի սրբավայրում, իսկ քրիստոնեության շրջանում՝ Վաղարշապատում, Շահապիվանում և այլուր:

4. Աշխարհաժողովի ծագումը

Աշխարհաժողովը Հայաստանում, ամենայն հավանականությամբ, գոյություն է ունեցել 16 թվականից շատ ավելի վաղ ժամանակներում: Թերևս ճիշտ են այն ուսումնասիրողները, ովքեր Աշխարհաժողովի ծնունդը կապում են դեռևս տոհմացեղային վաղնջական ժամանակների հետ, երբ ստեղծվում էին տոհմերի կամ ցեղերի ավագների ժողովներ կամ խորհուրդներ [5, էջ 249; 6, 828]:

Վաղ պետական կազմավորումներում դրանք դառնում են արքային կից գործող բարձրագույն խորհրդակցական մարմիններ: Արքայի հրավերով գումարվող բարձրագույն խորհրդակցական մարմին՝ Ավագների ժողով է հիշատակվում Հայաստանի առաջին՝ Արատտա պետությունում (Ք.ա. XXVIII-XXVIIդդ.): Սկզբնաղբյուրների համաձայն, Արատտայում Ավագների ժողովը գործում էր իշխանության գլուխ կանգնած քրմապետ-արքային կից. վերջինիս իշխանությունը տարածվել է և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր իշխանությունների ոլորտներում, այսինքն՝ երկրի կառավարման համակարգը եղել է աստվածապետական (կրոնապետական, թեոկրատական)[1]: Ավագների ժողովի հետ խորհրդակցելով՝ քրմապետ-արքան որոշում էր առավել կարևոր պետական հարցերը (պատերազմ հայտարարել, հաշտություն կնքել և այլն) [12]:

Արքային կից գործող բարձրագույն խորհրդակցական մարմին՝ Ավագների ժողով է հիշատակվում նաև Հայասա-Ազզի թագավորությունում (Ք.ա. XV-XIIIդդ.) [13-15]: Վանի թագավորությունում (Ք.ա. IX-VIIդդ.) հիշատակվում են արքայի խորհրդականները, որոնք, թերևս, Ավագների ժողովի անդամներն էին [16]:

Թե ինչպիսի դասային և սոցիալական կազմ է ունեցել Ավագների ժողովը հնագույն հայկական թագավորություններում, հայտնի չէ: Սակայն

[1] Աշխարհիկ և հոգևոր իշխանությունների հարաբերակցությունը հայոց պատմության հետագա դարերում, թեոկրատիայից անցումը աշխարհիկ պետության ունեցել են հետաքրքիր ընթացք: Նախ տեղի է ունենում քրմապետ-արքայի պաշտոնի բաժանումը արքայի և քրմապետի, ընդ որում, սկզբնական շրջանում արքայական ընտանիքն իր ձեռքում է պահում նաև քրմապետի պաշտոնը (Երվանդ Դ-ի օրոք քրմապետը նրա եղբայր Երվազն էր, Արտաշես Ա-ն քրմապետ դարձրեց իր որդի Մաժանին), ավելի ուշ այդ պաշտոնը տրվում է քրմապետական տոհմին (Վահունիներ), որի իրավասությունները քրիստոնյա Հայաստանում անցնում են Գրիգոր Լուսավորչի տոհմին: Հետագայում կաթողիկոսական պաշտոնը դարձավ ընտրովի, շատ ավելի ուշ տեղի ունեցավ եկեղեցու և պետության անջատումը:

Ավագների ժողովի զարգացմամբ ստեղծված Աշխարհաժողովն արդեն որակապես նոր երևույթ էր: Այն գոյություն է ունեցել Արտաշեսյան և Արշակունյաց ժամանակաշրջաններում, ունեցել է բացառիկ մեծ ընդգրկում՝ ներառելով բոլոր խավերի ներկայացուցիչներին:

5. Աշխարհաժողովի դասային ընդգրկումը և իրավասությունները

Աշխարհաժողովն ընդգրկում էր ժողովրդի բոլոր խավերի ներկայացուցիչներին՝ արքայից մինչև ռամիկ շինական, որոնք «աշխարհովին միաբան խորհուրդ անելով»՝ լուծում էին երկրի կյանքում ծառացած խնդիրները: Այդ առումով Աշխարհաժողովը երկրի ներկայացուցչական բարձրագույն ժողովն էր, դեմոկրատիայի բարձրագույն արտահայտությունը՝ իր ժամանակի համար շատ լայն ընդգրկումով (կային այլ ժողովներ ևս. եկեղեցական, նախարարական, քաղաքային ավագանու խորհուրդներ):

Ժողովրդի բոլոր խավերի ներկայացուցիչների նկատմամբ անխտիր հարգանքն արտահայտվում էր նաև Հայոց արքաների հրովարտակների ներածական բանաձևերում: Օրինակ՝ «Մեծ Հայքի Տրդատ արքայից՝ մեծամեծներին, իշխաններին, նախարարներին, գործակալներին և այլ մարդկանց, որոնք իմ իշխանության ներքո են՝ ավաններում, շեներում, գյուղերում ու ագարակներում, ազատներին ու շինականներին՝ ողջույն, բոլորին միաժամանակ» [4, ԺԲ, 126] կամ «Մեծ Հայքի Տրդատ արքայից՝ երկրներին, գավառներին, նախարարներին, զորքերին, շինականներին ու ամենքին՝ ողջույն» [4, ԺԲ, 134]: Աշխարհաժողովում բոլոր խավերի ներկայացուցիչների ընդգրկումն արդեն *ոչ թե նրանց նկատմամբ պարզ հարգանքի, այլ նրանց շահերի հետ հաշվի նստելու արտահայտություն էր, նրանց մասնակցությունը պետության կառավարմանը:*

Համեմատելով հայկական Աշխարհաժողովն այսօրվա պառլամենտարիզմի առաջնեկը համարվող անգլիական պառլամենտի հետ՝ տեսնում ենք, որ Աշխարհաժողովն ունեցել է դասային ավելի մեծ ընդգրկում. նրանում ընդգրկված էին նաև գյուղացիության ներկայացուցիչները («ռամիկ շինականներ», «շինականների դասապետեր»), իսկ անգլիացի գյուղացիությունն ընդհանրապես ձայն չուներ պառլամենտում: Աշխարհաժողովն իրավասություններով ևս չէր զիջում անգլիական պառլամենտին. ինչպես վերը նշեցինք, այն իրավասու է եղել հայտարարելու պատերազմ, աթոռազրկելու երկրի անարժան աշխարհիկ և հոգևոր տերերին, կազմակերպելու կաթողիկոսի ընտրություն, սահմանելու օրենքներ ու կանոններ բոլորի համար: (Գիտական ճշգրտության հանդեպ մեղանչած չլինելու համար նշենք, որ Անգլիայում ևս հիշատակվում է Աշխարհաժողով, որը, սակայն,

արքային խորհուրդ տալուց բացի՝ այլ իրավասություններ գրեթե չուներ, կատարում էր ավելի ձևական դեր, ուստի և ճիշտ համարեցինք մեր Աշխարհաժողովը համեմատել անգլիական պառլամենտի հետ):

Եզրակացության փոխարեն

Մեր պատմության ընթացքում երկրի ներկայացուցչական բարձրագույն ժողովի այդպիսի մեծ խավային ընդգրկումը գնահատելով որպես խիստ դրական երևույթ՝ չենք կարող անդրադարձ չկատարել մերօրյա իրականությանը: Դժբախտաբար, վերջին տարիների (հատկապես վերջին) պառլամենտական ընտրություններում ձևավորվել է պառլամենտը «գործարար վերնախավի ժողովի» վերածելու միտում: Մինչդեռ երկրում կան բնակչության զգալի տոկոս կազմող և լուրջ դերակատարում ունեցող խավեր, որոնք չունեն ներկայացուցիչներ խորհրդարանում, և նրանց շահերի ներկայացումը հաճախ պայմանավորվում է այս կամ այն «գործարարի» կամ քաղաքական գործչի պոպուլիստական միտումներով՝ չստանալով հետևողական ընթացք:

Պետության կառավարման բարձրագույն օղակներում երկրի բոլոր խավերի շահերը ներկայացնող որևէ օղակի (կամ օղակների) գոյությունը, կարծում ենք, միայն դրականորեն կնպաստի Հայաստանի Հանրապետության հետագա զարգացմանը:

Այս ամենի համատեքստում, ճիշտ կլիներ, որ այսօր ոչ թե կրկնօրինակեինք Արևմուտքին, այլ հիմք ընդունելով մեր պատմական իրականությունը՝ ՀՀ խորհրդարանը «Ազգային ժողով»-ի փոխարեն կոչեինք «Աշխարհաժողով»: Պատմական անվանումից բացի, այն իմաստաբանորեն ևս ավելի ճիշտ կլիներ, քանի որ մեր խորհրդարանն այսօր միայն Հայաստան (այն էլ՝ միայն ՀՀ) աշխարհի ժողովն է: Իսկ համայն հայության համար, երբ մեր ազգի մոտ 70%-ը սփռված է հայրենիքից դուրս, «Ազգային ժողով» լինելու հավակնություն պետք է ունենար «Համահայկական վեհաժողովը (կոնգրեսը)»:

Նման մտահղացման իրականացումն, անշուշտ, ավելի ցանկալի կլիներ, եթե մի պահ պատկերացնեինք, որ «Աշխարհաժողովը» մերօրյա Հայաստանում կարող է դառնալ բոլոր դասերի, բոլոր խավերի իրավունքների պաշտպանության և համերաշխության երաշխավորը[1]:

Հուլիս, 2006թ.

[1] ***Ծան. խմբ.*** – Հաշվի առնելով պառլամենտական ինստիտուտի կարևորությունը արդի պետության օպերատիվ կառավարման համակարգում, ինչպես նաև երկու հայկական պետությունների (ՀՀ և ԼՂՀ) առկայությունը «Ազգային ժողովը» «Աշխարհաժողովի» վերածելու միտքը փոքր-ինչ վիճելի է: Միևնույն ժամանակ, ներկայումս գործող «Հայրենիք-Սփյուռք» խորհրդաժողովների կազմակերպչական ձևաչափը և բովանդակությունը հիշեցնում են խորհրդային տարիներին «հերթական» համագումարները և աղեկվատ չեն հայությանն ուղղված մարտահրավերներին: Այդ համատեքստում նման «խորհրդաժողովը» «Համահայկական վեհաժողովի» վերածելու առաջարկությունը առավել քան կառուցողական է և հրատապ:

Աղբյուրներ և գրականություն

1. *Левицкий Я.А.,* Гражданская война 1263-126 гг. Возникновения парламента, «Всемирная история», т. III, М., 1957, с. 369-371.
2. *Баглай М.В.,* Парламент, Большая советская энциклопедия, т. 19, М., 1975, с. 215.
3. Պառլամենտ, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 9, Ե., 1983, էջ 135-136:
4. *Ագաթանգեղոս,* Հայոց պատմություն (քնն. բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, աշխարհաբար թարգմ. Բ. Ուլուբաբյանի), Ե., 1982:
5. *Մանանդյան Հ.,* Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, Երկեր, հ. Դ, Ե., 1981:
6. *Երեմյան Ս.Տ.,* Մեծ Հայքի թագավորության պետական կառուցվածքը մ. թ. I-II դարերում, Հայ ժողովրդի պատմություն (ԳԱ հրատ.), հ. I, Ե., 1971, էջ 828-829:
7. *Փավստոս Բուզանդ,* Հայոց պատմություն (աշխարհաբար թարգմ. Ստ. Մալխասյանցի), Ե., 1968:
8. *Հովսեպոս Փլավիոս,* Հրեական հնախոսություն (հատվածներ), Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Ե., 1981, էջ 313-314:
9. *Երեմյան Ս.Տ.,* Մեծ Հայքի պայքարը անկախության համար Արտաշեսյան դինաստիայի անկումից հետո, Հայ ժողովրդի պատմություն (ԳԱ հրատ.), հ. I, Երևան, 1971, էջ 712:
10. Հայոց կանոնիս (Կանոնք Շահապիվանի), Կանոնագիրք Հայոց, հ. Ա (աշխատասիրությամբ՝ Վ. Հակոբյանի), Ե., 1964, էջ 427:
11. *Կատվալյան Մ.,* Աշխարհաժողով, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1, Ե., 1974, էջ 484:
12. *Մովսիսյան Ա.Ե.,* Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների), Ե., 2005, էջ 92-93:
13. *Forrer E.,* Hajasa-Azzi, “Caucasica”, 1931, № 9, p. 5.
14. *Капанцян Г.,* Хайаса-колыбель армян. Этногенез армян и их начальная история. Е., 1948, с. 25.
15. *Բարսեղյան Լ.,* Հայասա-Ազզիի սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին, ՏՀԳ, 1963, թիվ 6, էջ 103-105:
16. *Հարությունյան Ն.Վ.,* Ուրարտուի պետական կառուցվածքը, Հայ ժողովրդի պատմության (ԳԱ հրատ.), հ. I, Ե., 1971, էջ 346:

АШХАРАЖОХОВ: ВЫСШИЙ СОВЕЩАТЕЛЬНЫЙ СОВЕТ ДРЕВНЕЙ АРМЕНИИ КАК ГАРАНТ СОСЛОВНОГО СОГЛАСИЯ СТРАНЫ

Артак Мовсисян

Резюме

В статье рассмотрены правомочия, функции и сословный состав высшего совещательного совета Древней Армении – Ашхаражохова. Первоисточники указывают, что Ашхаражохов был правомочен объявлять войну, отстранять от должностей недостойных светских и духовных лидеров страны, организовывать выборы католикоса, устанавливать законы и правила. Особо отмечается тот факт, что в составе высшего совещательного совета были представлены все сословия страны. Включение представителей всех сословий в состав высшего совещательного совета, по мнению автора, является чрезвычайно позитивным явлением, и данный принцип следует использовать в нынешней системе правления Армении.